

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«-----» ----- 2021թ.

N ----- Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԱՂՎԱՆ ԱՇՈՏԻ ՉԱՏԻՆՅԱՆԻՆ

«ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 35-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի առաջարկությունը.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Հայ լեռնագնաց, ՀՀ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի վաստակավոր աշխատող, ՀԱՕԿ-ի պատվավոր անդամ, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի պրոֆեսոր, ԽՍՀՄ «Պատվավոր լեռնափրկարար» Ադվան Աշոտի Չատինյանին 60 և ավել տարի մարզչամանկավարժական գործունեություն ծավալելու կապակցությամբ, սերունդներ կրթելու, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառներում ունեցած մեծ ավանդի, երկարամյա անբասիր աշխատանքով Երևանի մարզական գործունեության, լեռնագնացության զարգացման գործում ունեցած նշանակալի ավանդի և հայկական սպորտի զարգացմանն ուղղված բեղմնավոր գործունեության համար շնորհել «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՀԱՅԿ ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԱՂՎԱՆ ԱՇՈՏԻ ՉԱՏԻՆՑԱՆԻՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

Սույն թվականի նոյեմբերի 20-ին լրանում է հայ լեռնագնաց, ՀՀ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի վաստակավոր աշխատող, ՀԱՕԿ-ի պատվավոր անդամ, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի պրոֆեսոր, ԽՍՀՄ «Պատվավոր լեռնափրկարար» Աղվան Աշոտի Չատինյանի 94 ամյակը:

Աղվան Աշոտի Չատինյանը ծնվել է 1927թ. նոյեմբերի 20-ին Ստեփանավանի շրջանի Վարդաբլուր գյուղում:

1934-1945 թվականներին ավարտելով գյուղի միջնակարգ դպրոցը, ընդունվել է Վանաձորի գյուղատնտեսական տեխնիկումը, որն ավարտել է 1946թ. գերազանցությամբ: Աշխատել է Վարդաբլուրի կոլտնտեսության փորձադաշտում որպես ագրոնոմ, միաժամանակ կատարել է գյուղի ակումբի վարիչի պարտականությունները:

1948-1952 թվականներին ընդունվել և ավարտել է Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտը և դասախոսական աշխատանքի անցել նույն ինստիտուտում նախ որպես դասախոս, ապա ավագ դասախոս, դոցենտ (1972) և պրոֆեսոր (1999): 1987-1995 թվականներին զլխավորել է կիրառական մարզաձևերի ամբիոնը: Նրա ջանքերով 1992 թվականին այդ նույն ինստիտուտում հիմնադրվել է «Փրկարարական գործ» մասնագիտություն:

2010-2016 թվականներին ղեկավարել է ՀՀ դահուկային սպորտի ֆեդերացիայի վերստուգիչ հանձնաժողովը:

2012-2014 թվականներին աշխատել է Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայում:

1961թ. Հայաստանում հիմնադրել է ձմեռային երկամարտ (բիաթլոն) մարզաձևը, իսկ 1969 թվականին՝ մականախաղը: Եղել է այդ մարզաձևերի հավաքական թիմերի առաջին ավագ մարզիչը: Նրա ղեկավարությամբ 1979 թվականին ՀԽՍՄ հավաքական թիմը մասնակցել է ԽՍՀՄ ժողովուրդների VII ամառային սպարտակիադային, որտեղ 16 մարզիկներ արժանացել են ԽՍՀՄ սպորտի վարպետի կոչմանը: Բացի այդ նա պատրաստել է խոտի հոկեյի ԽՍՀՄ հավաքական թիմի անդամի, 1980 թվականի Մոսկվայի Օլիմպիական խաղերի մրցանակակիր, 3 օլիմպիական խաղերի մասնակից, ԽՍՀՄ սպորտի վաստակավոր վարպետ Սոս Հայրապետյանին: 1962 թվականից մինչև ԽՍՀՄ-ի փլուզումը եղել է Հանրապետության միակ ավագ մարզիչը, որ ներկայացրել է Հայաստանը ԽՍՀՄ ամառային և ձմեռային սպարտակիադաներում, գրավել միջինից բարձր տեղեր, մարզիկներին ապահովելով սպորտի վարպետի կոչումներ: Բազմիցս մասնակցել է ԽՍՀՄ լեռնագնացության միութենական և Կովկասի առաջնություններին, ունեցել հաղթանակներ: 1958 թվականին ստացել է ԽՍՀՄ սպորտի վարպետի կոչում և ընդգրկվել է ԽՍՀՄ լեռնագնացների հավաքական թիմում, 1958 թվականին մասնակցել է Պամիրում անցկացվող սովետա-չինական էքսպեդիցիային:

Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հայկական պետական ինստիտուտում սովորելու տարիներին «ալպինիզմ» էին անցնում և ստուգաբքը ստանալու համար պետք էր մազլցել: Այս մազլցման վերաբերյալ Աղվան Չատինյանը պատմում է. «Շատ վախկոտ եմ եղել, բայց ստուգաբք ստանալու համար հաղթահարեցի վախս: Համալսարանում անցնում էինք «ալպինիզմ» առարկան, և

ստուգարքի ժամանակ շատ էի վախենում, որ պարանները կկտրվեն, ու ես կմեռնեմ: Առաջին անգամ ինձ մոտ ստացվեց ու դժվարություններ չգրացի: Իսկ հաջորդ անգամ ավելի արագ գնացի, քան հանրապետության չեմպիոնը»:

Ա. Չատինյանը 6 անգամ մասնակցել է ժայռամագլցման համամիութենական հավաքների և արձանագրել հաղթանակներ:

1952թ. մասնակցել է Արգնիում կազմակերպված ժայռամագլցման մրցույթին, որին մասնակցել է նաև Միխայիլ Խերգիանին: Մրցման դատավորը վրացի Ա.Գապարիձեն էր: Ժայռամագլցման արդյունքում Չատինյանը 41 վայրկյան տարբերությամբ հաղթանակ է տանում Խերգիանիի նկատմամբ: Խերգիանին այդ ժամանակ Սովետական Միության ուժեղագույն մարզիկ էր:

Աղվան Չատինյանը սպորտային վերելքներ իրականացրել է մինչև 1961թ.-ը: 1956թ. իրականացրել է Ուշբա-Շխելդա տրավերս-վերելքը: Հիշարժան է համարում Դոմբայ լեռների տրավերսը, որն ուներ 5-րդ կարգի դժվարություն: Դժվար վերելքներից է համարում 1957թ.-ի Ամանատու լեռան (3530մ) վերելքը, քանի որ դեպի գագաթ ճանապարհն անցել են 800-900մ պատային մագլցմամբ: Դժվարությունը պայմանավորված էր նաև ջրի բացակայությամբ, և պատի տաք լինելով, ինչի արդյունքում աշխատանքները պետք էր ձեռնոցներով իրականացնել:

1958թ. հրավեր է ստացել աշխատելու Միջին Ասիայում՝ Ալմա-Ատայի մոտակայքում գտնվող ճամբարներից մեկում, որի ժամանակ վերելք է իրականացրել Տալգար լեռ (4979մ): Այս վերելքի մասին Ա. Չատինյանը պատմում է. «Վերելքի ժամանակ բաճկոնիս գլխարկը գլխիցս չեմ հանել ու դրա արդյունքում ռուսները ծիծաղում էին ինձ վրա: Բայց սկզբում նրանք էին ծիծաղում, իսկ վերջում՝ ես: Նրանք բոլորն արևից վառվել էին»:

1958թ. Վիտալի Աբալակովից հրավեր է ստացել Սովետական Միության հավաքական թիմ՝ սովետա-չինական էքսպեդիցիոն թիմ: Թիմը կազմավորել էր Սովետական Միության ալպինիզմի ֆեդերացիան: Խումբը կազմված է եղել 15 հոգուց, որից երկուսը սվաններ էին, այդ թվում նաև Միխայիլ Խերգիանին, մեկը՝ հայ, ի դեմս Աղվան Չատինյանի, իսկ մյուսները՝ ռուսներ: Այս էքսպեդիցիայի նպատակը Էվերեստ լեռ բարձրանալն էր, սակայն պետությունների միջև առաջացած տարաձայնությունների պատճառով, Սովետական Միության թիմը էքսպեդիցիան չի շարունակում:

Աղվան Չատինյանը, բացառությամբ 59-61 թվականների, հիմնականում աշխատել է Էլբրուսի մոտ գտնվող Բաքսանի Բուրիվեսնիկ սպորտային ընկերության «Բուրիվեսնիկ» ճամբարում, որտեղ հիմնականում ուսանողներ էին գալիս: 1959թ.-ին կրկին Վ. Աբալակովի հրավերով Ա. Չատինյանը գնում է ալպինիզմի դպրոց, որը Կովկասում կամ այլ լեռնային երկրամասում էր գործում՝ տարվա մեջ երկու հերթափոխով: 59, 60, 61 թվականներին աշխատել է այդ դպրոցում, և հերթափոխներից մեկի ժամանակ աշխատել է հայերի հետ՝ Յուրա Կոպալյան, Ռաֆիկ Մելիքսեթյան, Ստեփան Մուրադյան, Էմիլ Հովսեփյան:

Վերջին լուրջ վերելքն իրականացրել է 1961 թվականին՝ խաչ-վերելք կատարելով Ուշբա լեռ: Նախքան 1961 թվականը շատերն էին փորձել խաչ-վերելք կատարել, բայց չէր ստացվել: Ուշբա լեռան 1-ին վերելքն իրականացվել է 1935թվականին գերմանացիների կողմից, տրավերսը նույնպես գերմանացիների խմբի կողմից է կատարվել 1937թվականին: Այս վերելքների վերաբերյալ ֆիլմ է նկարահանվել, որի ցուցադրման առթիվ նշվել է. «Հերոս կլինի այն մարդը, ով խաչ կանի»:

Տարիներ անց այդ հերոսը դարձավ Աղվան Չատինյանը:

Սպիտակի երկրաշարժի ժամանակ իրականացրած աշխատանքներում աչքի ընկնելու համար Ա. Չատինյանը ստացել է ժետոն:

Վերջին վերելքն իրականացրել է 2001թվականին՝ բարձրանալով Արագածի Հյուսիսային գագաթ, որի ընթացքում լեռան գագաթին կանգնեցրել է խաչ քրիստոնեության 1700 ամյակի կապակցությամբ:

Աղվան Չատինյանը ունի հրատարակված մոտ 100 աշխատանք, որպես կասկադոր մասնակցել է մի շարք գեղարվեստական ֆիլմերի, որոնցից հայտնի են «Անձամբ ճանաչում եմ», «Ուրվականները հեռանում են լեռներից», «Թռիչք անդունդի վրայով», «Սգավոր ձյունը», «Ուղղահայաց» փոխարինելով հանրաճանաչ դերասաններ Վլադիմիր Վիսոցկոյն, Գուրգեն Թոնունցին և այլոց:

Վերելքներ՝

Ուշբա-Շխելդա տրավերս, Ուշբա խաչ, Մագրա (4-րդ կարգի բարդություն), Դոնգուս (4-րդ կարգի բարդություն), Էլբրուս, Ուլու-Տաու Չանա (Աբալակովի ուղիով, Կենտրոնական կովկաս), Դամբայ-Ուզեն տրավերս (Արևմտյան Կովկաս), Ամանաուզ հարավային պատով, Մաշոդ Մամեդով (Միջին Ասիա), Պիոներ (Պամիր), Տագար, Պիկ Պերվոյե Մայա (Կովկաս), Պիկ Ավիացիա (Կենտրոնական Կովկաս), Կիրայիչ և այլ լեռներ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՀԱՅԿ ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԱՂՎԱՆ ԱՇՈՏԻ ՉԱՏԻՆՅԱՆԻՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Աղվան Աշոտի Չատինյանին «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին» Երևանի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԱՂՎԱՆ ԱՇՈՏԻ ՉԱՏԻՆՅԱՆԻՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՄՊԱՍՎԵԼԻՔ ԷԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Աղվան Աշոտի Չատինյանին «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին» Երևանի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում էական փոփոխություններ չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՀԱՅԿ ՄԱՐՈՒԹՅԱՆ